ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 496-Ա **08 սեպտեմբերի 2025 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 16-Ի N 443-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի և «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2024 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ միասնական խորհուրդների կազմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի մայիսի 10-ի N 245-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 443-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման հավելվածի 13-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արծվանիստի միջնակարգ, Ծովինարի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ, Ծովինարի տարրական, Վարդենիկի Ռ. Հովհաննիսյանի անվան Հ.1 հիմնական և Վարդենիկի Ա. Օհանյանի անվան Հ. 2 հիմնական դպրոցների միասնական կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի կազմում «Մանուկյան Կարինե Մուշեղի /մանկխորհրդի ներկայացուցիչ/» բառերը փոխարինել «Խաչատրյան Լալա Փոխանի /մանկխորհրդի ներկայացուցիչ/ բառերով:

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ